

ԱՐԱՅԵՐ ԵՒ ԻՐ ԲԱՐՔԵՐԸ

(Շար. տե՛ս «Բազմավեպ» 1957, թ. 8-10, էջ 120)

ԳԼՈՒԽ Ե.

ԲԱՌԱՐԱՆ

Հ.

Հէնք - գոյնդգոյն մանածէ բազմաթեւ պատրաստութիւն՝ մանուսա գործելու համար: Հիւնել, վերոյիշեալ պատրաստութիւնը կատարել:
Հըլել - ընդեղէններու մէջի աղտերը ժող-վել, մաքրել:
Հմար - համար. «ասոր հմար քըղի բան չեմ ըսեր նը»:
Հոլլաթ - երեխային օրօրոցին մէջ դըր-ուած կարմիր տաք հողին վրայ փռելիք լաթ, որպէսզի յետոյքը չաղտոտի:
Հոլ քար - քար մը զոր տաքցնելով օրօց-քին հողուն մէջ կը դնեն ձմեռ ժամա-նակ որ տաքնայ եւ երեխան հանգիստ քնանայ. պառկեցնելու ատեն վը հա-նեն դայն:
Հոնի'կ - հո'ն, այն տեղ:
Հոսի'կ - ա'յս տեղ, հոս:
Հուռուք, հուռուքու - ահա' հոն:
Հուռուք, հուռուքա - ահա հո'ս, մօտը:
Հոր - մանուսա գործելու մեքենայ: Հոր գործել - մեքենայով մանուսա գոր-ծել:
Հօ'փ, հօփի'ա - երեխան վեր վեր նետելու բռնելու, կամ տեղ մը տեսնել, երթալը բացատրող բառ:
Զ.

Զագուկ - փաղաքական բառ, որ որդի, գաւակ կը նշանակէ, ինչպէս նաեւ այլ եւ այլ մանր կենդանիներու ձագերը:
Զաղկել - զարնել ծեծել բուրդ ու բամ-

բակ՝ բարակ երկայն փայտով մը: Պը-տուղները՝ ձողով մը, որ վար թափին:
Զեռք տալ - բաւական ըլլալ, բաւել:
Զեռք ուզել - աղջկան մը՝ հետը կարգուե-լու համար. «ձառքդ պազնիմ»:
Զեռնել - ձեռքով շօշափել, դաշել:
Զիթ - լեռնային վայրի փշոտ կանկառէ մը ելած սպիտակ հիւթը, որ դոր քարի մը վրայ կաթեցնելով արեւին տակ կը պնդանայ եւ առաձիգ է. ասիկա կը ծա-մեն կիները եւ տղաք, առատ քուք կը ձեւացնէ եւ հետեւաբար մարսողու-թեան կ'օգնէ, ակոսները մաքրելով կը ձերմկցնէ. (տճ. սագըղ):
Զիւնո - ձմեռ:
Զոն խաղալ - ձիւնադնդակ խաղալ:

Ճ

Ճաթիլ - անյագօրէն ուտել, պայթիլ. (նախատական բառ) «կե'ր ու ճաթէ»:
Ճաղ - պատգարակ մեռելի, հիւսելու փոքր շիշեր. քեհերին ճաղը, որուն վը-րայ դէրտէկը կ'անցընեն:
Ճաղփատ - մեռելի պատգարակ:
Ճաննիկ - երկաթէ զարդարուն կաղապար մը, ծակ ծակ, որով խմորը հաւկիթի մէջ թաթիլելով կարագով կը տապկեն եւ վրան անոյշ ցանելով կ'ուտեն տո-նական օրեր:
Ճգնգոգ - լեռնային բոյս մը, որուն դունդ արմատը կ'ուտուի՝ վրայի հիւսուած թելերէն մերկացնելով:
Ճգալ, ճգնալ - հիւանդ երեխային հանած ձայնը. տքտքալ՝ հիւանդին:

Ճը'գ - բառ մը՝ մանուկը զգուշացնելու որ չդպչի կրակին կամ ճրագին:
Ճին - դեւ, սատանայ, չար հոգի:
Ճինչել - ճչել, սուր ձայնով օգնութիւն կանչել. վախէն ճչել:
Ճիւլ - ոտք:
Ճկոք - ճկոյտ մատը:
Ճղակտոր - չարամաղթական բառ. «ճղա-կտոր ըլլաս», ջարդուի'ս, կոտորուի'ս:
Ճղել - երկու ճիւղի բաժնել, պատուել:
Ճմուռ - թռնիկի, փուռի նոր տաք հացե-րը ճմբարեկելով ուտելիք մը, շատ ա-խորժահամ:
Ճնկիլիկ - բոժոժ, մանր կլոր զանգակիկ որ կենդանիներու վզին կը կապեն:
Ճշուրտտել - սաստիկ ճիշերով օգնութեան կանչել. «դէմի մեռելատունէն ճշուր-տելու հետ էն»:
Ճոք - ծայր, սահման, սկիզբ. «ճոթէն բռնէ' ու քաշէ'»:
Ճուռու - հաւերը կանչելու ձայն:
Ճպուռ - աչքի բիժ, ճպոտութիւն: Ճըպ-ռոտ, ճպուռ կապած աչք:
Ճոիկ - քիչ վաղող ջուր, աղբիւր:
Ճոխիկ - անիւներու վրայ շինուած աթո-ռակ մը, մէջտեղը ծակ, ուր երեխան ոակ մը, մէջտեղը ծակ, ուր երեխան կը կանգնեցնեն, որպէսզի առանց լի-նալու, հրուշտկելով շարժէ ու քալել սորվի: Հոր գործելու մեքենային, աղ-բի վրայի ճախարակները որ ցնկուկ ալ կը կոչուին:
Ճրագու - եղան, ոչխարին, կովին, այծին փորէն ելած ֆարալը, ուսկից երբեմն վառելու մոմ կը շինեն որ շատ անա-խորժ հոտ կ'արձակէ. ցնկնբախտ:

Մ.

Մալեգ - թութի, խաղողի խաղմուղով ալիւրախառն թանձր հիւթը:
Մախաթ - խոշորահիւս տապակ, կա-պերտ կարելու մեծ ասեղ:
Մախթուն, մաղթուն - մեռել գտնուած տան մը մէջ կատարուած լաց. «դրաց-նու տունը մախթուն կ'երթամ տէ, սեւ մեմտիւս կը փնտռեմ նը»: «Մախ-

թուն գացի'ր»: «Ամա, ես լաց ըսել չեյ-տեմ, դու կ'ընա'ս»:
Մախիթ - մոխիր. «մախիթ ջուր կու բըռ-նեմ քի վրացք էնէմ»:
Մակարթ - տաք, եղի կաթին մէջ դրուած մածունը՝ մակարթ կ'ըսուի: Մակարթի - մածուն չինել:
Մաղմաղ - մոխրախառն կրակ, խաւձալ:
Մաղուք - բան մը մաղելէ վերջ մաղին մէջ մնացած խոշուքը, աղտեղութիւ-նը:
Մամա - դայեակ, նորածին մանուկ առ-նող կին. «հարսս տղաբերքի մէջ է, մամա մը կանչեցէք»:
Մամաչքթիկ - խրտուիւակ, զոր պարտէզ-ներու, բանջարանոցներու, այգիներու մէջ կը տնկեն՝ որ թռչունները վախ-նան եւ չմօտենան ուտելու: Դարձեալ երբ անձրեւ չգայ, ասիկա փողոցէ փո-ղոց կը պտտցնեն, դռնելով.
«Մամաչքթիկ նէ' իստէր, Ալլահտան եաղմուր իստէր. վէ'ր, Ալլահըմ, վէ'ր, Եաղմուր իլէ պիւր տէ սէլ»:
Մամուխ - Սալորի նման պտուղ մը, որ երբ մեծնայ ու հասունանայ՝ կը դեղնի, իսկ ուրիշ տեսակներ՝ կը կարմրին. քաղցր ու թթուալ: Թուրքերը ցան է-րիյի կ'անուանեն: Ծառը՝ մամխենի, մամխի:

Մանի - տիւր, լարեան երգ:
Մասուրա - դէրտէկ՝ վրան փաթթուած մանածի թել:
Մէշիկ - կրակ բռնելու ունելիք:
Մաշկ - վիժած հաւկիթ՝ առանց պինդ կե-ղելի:
Մատնել - մատով դաշել:
Մարդ-մուրդ եւ մարդ-մարդաստան - բնաւ մարդ գտնուած չըլլալը:
Մարդակ - տան ձեղունին վրայ շարուած ձողերը:
Մարմալ - սպիտակ, նուրբ եւ լայն սա-ւան մը, որով կը ծածկուին կիները՝ երբ տեղ մը պիտի երթան:
Մաբուք - կարծր փայտէ, նաւակաձեւ

գործիք մը, որ մէջտեղը լայն բաց-
ուածք մ'ունի, ուր կ'անցնեն մասու-
րան հեմքը գործելու համար, եւ որուն
երկու ծայրերը սուր երկաթով կը վեր-
ջանայ:

Մզմզալ - վերքի մը ցաւելը. գործ մը
համբերատար խնամքով ընել:

Միլթոն, միլթան - ասուկէն կարծ ըղ-
զեստ մը՝ մինչեւ մէջքը իջնող, առա-
ջակողմը բաց:

Միշտիշ - (արարելէն) ծիրան:

Մկնդեղ - մուկերն սպաննելու դեղ:

Մնտոն - աղտոտել, ծրտել: Մուստառ -
աղտոտ, ծրտոտ, փխ:

Մշլ մշլ, մշալ - անոյշ եւ երջանիկ քուն
ըլլալը մանկան:

Մշտուկ, մշտել - ծայրը սուր փայտ մը՝
կենդանիները քշելու համար. մշտուկը
խոթել, հրել:

Մումուրդան - մորմենի եւ պտուղը:

Մումուր - սուր ցաւ: Քթին տակէն հա-
նած տոգոհութեան ձայն:

Յ

Յեմէփ - արդեօք, միթէ, (աճէպա):

Յեմէն - ամէն, իսկոյն:

Յեմի - հօրեղբայր (էմի):

Յեմէջեւ - առջեւ, նախ: Յեմէջի, առաջին
զաւակը, առաջին տուած պտուղը:

Յեփ ընել - ուտել՝ մանկան:

Յիցցուն - յիսուն:

Յո՞ւմ - որո՞ւ. «յո՞ւմ կ'ըսես նր»:

Յո՞ւր - ո՞ւր. «յո՞ւր է գանակը»:

Ն

Ներկիզ - նարդէս (նաողղղ):

Ներ, ներդ - երկու եղբոր կիներն իրա-
րու ներ կը կոչեն:

Նիշխաւէկ - ջուրի մէջ փտած ցորենի սպի-
տակ ալիւրամասը՝ չորցուած, նիշխա-
ւէկ կը կոչուի. անուշեղէններու հետ
կը գործածուի. թուրթի եւ խաղողի չի-
րաներու հետ եփելով կը թանձրացնէ
եւ մալէկ կ'ընէ:

Նշդարի - անպտուղ ծառ, որուն վրայ որ-
թատունկը կը փաթթուի: Նոյնը կար-
ծեմ արարելիքին Հացամեմի կը կոչէ,
որուն հունտը տափարակ, երկայն ող-
կուղածեւ կը կախուի:

Շ

Շալ - ցփսիէ գօտի, զլխու եւ կոնակի
ծածկոյթ:

Շալակ, շալկել - կոնակ, բեռ. «շալակ մը
փայտ բերի լեռնէն»:

Շաղ - գիշերը իջած ցօղ:

Շաղկել - շաղուել, խմոր, ցելու եւն.:

Շամփուր - թոնիրի կրակը խոռնելու ա-
տամնաւոր գործիք. «կէն շամփուր,
դոր շամփուր ունի՞նք»:

Շատերես - պինդ երես, անպատիւ:

Շարմաղ - նրբահիւս թելերով մաղ:

Շարմաղել - նրբաթել մաղով մաղել:

Շարոց - խաղողէ չինուած ոռնիկ:

Շերեշ - չրիշ, սոսինձ (տճ. չրիշ):

Շեհեւտ - աղուոր, գեղեցիկ: Շէհէտուկ -
աղուորիկ, նաղելի (աղջիկ, հարս):

Շեմիք - դրան սեամը:

Շլի - վիղ. «մեղքը շլիք յըլի - մեղքը
վիղդ թող ըլլայ»:

Շըռփոդ - երեխաներու օրօցքին մէջ գըր-
ուած կարմիր հող:

Շիւ, շիւէ, շփիք - ճղմուած խաղողի կե-
ղեւները:

Շիրաւանդ - խաղողի հատիկներէն մեր-
կացած կոթունները:

Շխրտոց, շխրտուք, շխրտալ. նոյնպէս
խշրտոց, խշրտուք, խշրտալ - լսուած
բնական ձայները՝ չոր տերեւներու:

Շնթուկիլ - շան պէս պառկիլ (անարգա-
կան ձեւ). «գնա՛ շնթուկէ»:

Շշմիլ - զարմացած մնալ, շուարիլ:

Շոգ - շատ տաք, չող, չող:

Շոշորթ - հետք, նշան, խնթո՛ւկ:

Շոք - երեխային տակ դնելիք լաթեղէն:

Շուլալ - խոշոր կար: Շուլիլ - խոշոր եւ
իրարմէ հեռու կարել:

Շուլալ - կնճիթ (տճ. սուսամ). իւղոտ
մանր հոնտ մը որ խմորեղէններու վը-
րայ կը ցանեն՝ համեմեղու համար:

Ո

Ործալ - փսխել: Ործալ, երեխային կե-
րած կաթը փսխել:

Ումպ - կաթիլ. «սա սուքած էրաղէս
ումպումպ կամ ըմպի մը համտեմէ քի
տեսնաս ի՞նչ համով է»:

Ումք - յօնք, արտեւանունք:

Ուռնալ - հարստանալ, ուռիլ:

Չ

Չախչալիս - ջաղացքի քարին վրայ քսուող
փոքր տախտակ մը՝ որ նմանաձայն կը
հնչէ եւ համաչափ:

Չամիշ, չեմիշ - ցամքած, չորցած խա-
ղող:

Չեշ - խաղողի ճղմուածքէն մնացորդ տե-
րեւները. դատարկ ողկոյղները. մեղ-
րամոմի դատարկ բջիջները՝ որդնա-
կեր. չեչոտ կամ ցեցոտ է մեր մեղրա-
մոմը»:

Չէֆէգօտի - ծիածան:

Չըղ - ձիւնակոյտ որ լեռներէն վար գլո-
րելով ձեւացած է. ձեան հիւս:

Չիտես, չտես - ծակաչք. կարծես բան մը
կերած, տեսած չեղող:

Չիր, չիր - չորցուած մրգեղէն:

Չորքան - չորցուած թան, մածուն, զոր
ձմեռը հարելով ապուր կը շինեն:

Չորոտ - կծծի, աղահ:

Չօ՛ - ձի, էշ յառաջ մղելու ձայն:

Պ

Պաքիկ ընել - պառկիլ, (մանկանց համար
գործածելի բառ):

Պան - չհալած մեղր, խորխիս:

Պաստելիս - խաղողի եւ թուրթի շիրաններուն
սաւաններու վրայ չորցածը՝ պաստելիս
կը կոչուի:

Պատիմնան - սմբուկ (փաթիլման):

Պարտիլ - պահել, ծածկել՝ աչքէ, ամօ-
թը ծածկել:

Պգտըտիկ, պգտիկ, պտըտիկ, պիլիկ -
փոքր, փոքրիկ, կարճ, կարճուկ...:

Պէյրոս - պատուաստ, պատուաստել:

Պընիկ - հաստեղէկ հացեղէն:

Պիշի - խմորեղէնի տեսակ մը, զոր կը շի-
նեն խմորը նուրբ բանալով եւ իրարու
վրայ քանի մը կարգ բարդելով, մէջ-
տեղերը կարագով օծելով, յետոյ սա-
ճի վրայ կամ լայն տապակի մէջ տապ-
կելով. ուտելու պահուն մեղր, կամ
ռուպ, կամ շաքար կը ցանեն. շատ հա-
մեղաճաշակ է:

Պլոլուր կամ պլոլուր - խաշած ցորենը՝
չորցուած, որով փիլալ կը շինեն.
«պլոլէ փիլալ»:

Պլոլել - ոլորել, փաթթել, դարձնել:

Պլտիկ - ասկեխնձորի մանր եւ կլոր տեսակ
մը:

Պլպլալ, պլպլալ - եփիլ սկսելու նշան
կամ նմանաձայն վիճակը:

Պնեղ - ընկոյղի միջուկ. կենդանիներու
ոտքի եղունգաւոր մասը, կոճղը:

Պնտկել - աչքերը ճմրտեցնել:

Պոքնալ - պոթիկալ, ցատկել:

Պուլակ - մանածի խումբ խումբ բաժնը-
ւած մասերը:

Պումպար - կենդանիներու փորոտիք:

Պուտ, պտիկ - քիչ մը, կաթիլ մը:

Պուտուկ, պտուկ - կերակուր եփելու
թրծուն հողէ ցած աման:

Պտխտիլ - խաղողին հատիկները կոթու-
նէն քաղել:

Պտուկ կոտրող - կճեղաւոր ծաղիկ մը որ
ձիւնհալէն վերջ առաջին անգամ դուրս
կու գայ:

Պտոց - ցուցամատով եւ բթամատով առ-
նուած քիչ մը բան (աղ, պղպեղ եւն.):

Ջ

Ջէհէր - մանածի թելը դէտէկի վրայ
փաթթող ճախարակաւոր գործիքը:

Ջլիշիլ - ոտքով ճղմել, ջախջախել:

Ջղալտոտ - ջրարբի տեղեր բուսնող լայ-
նատերեւ խոտեղէն որ վերքեր բուժե-
լու գորութիւն ունի:

Ռ

Ռէշէլ - խաղողի հիւթով եւ կրտած գը-
ղումով շինուած քաղցրաւենի:

Ռուս - թուրք, խաղողէ շինուած քաղ-
ցրեղէն. սալորէ շինուածը կը կոչուի
թրոնալ, որ է թթու ուսալ:

Ս.

Սալ, սալաք - տափարակ, յղկուած ե-
րեսով քար:

Սալուոր - սալոր պտուղը:

Սալս - ծակ ծակ անօթ մը:

Սամիթ - սամիթ, համեմատոր բոյս մ'է,
աղածոյ (թուրջու) բոյսերու մէջ կը
դրուի, (ինչպէս՝ պղպեղ, վարունգ,
կաղամբ եւն.) իր անոյշ համը տալու
համար:

Սայել, սայրել - սանտրել գլուխը ...
տնկել՝ ածուներու մէջ, իրարմէ ան-
ջատ՝ ինչպէս սանտրի ակոսները՝ ո'ր
եւ է կանաչեղէն. «պղպեղի սատրները
սայեցի»», այսինքն՝ տնկեցի:

Սարեկ - խնոցիին կամ որեւէ անօթներու
բերան գոցող կաշի:

Սեկ սանտ - փոսաւոր քար, որուն մէջ
ընդեղէններ կը ծեծեն՝ թեփերը հանե-
լու համար:

Սեկեկի, սեքեկի - սերկեկի:

Սեուց - աչքի սեւ մասը:

Սելիկ - կանաչ լուբի:

Սիկի - քողերու եղերքը ասեղով բանած
զարդ, զարդածաղիկներ. մատի կամ
դէմքի վրայ ելած պինդ մսի կտոր մը,
սեւ կոծիկ մը:

Սիմի - պղնձէ, կլայեկուած մեծ ախտէ,
բոլորածէ:

Սլիի - լքանիլ, խորտակուիլ սիրով:

Սլիտի, սլիտալ - աստանդական, թափա-
ռիկ շրջիլ: Սլիտի, թափառիկ:

Սլիտորգուշ - սխտոր ծեծելու փայտէ կամ
պղնձէ անօթ:

Սնուլս - ծեծուած մսէ համեմատաւն եր-
շիկ, որ արեւին տակ եւ չուքի մէջ կա-
խելով կը չորցնեն՝ տոպրակի մէջ:

Սոխուլ - մացառուտ բոյս մը որ ոսպա-
ծեւ պտուղ մ'ունի եւ ներկարարութեան
մէջ կը գործածուի:

Սոխրած - մանր ջարդուած եւ կարագի
մէջ տապկուած սոխ:

Սոդոց - սոդոց. «սոդոց, ուրազ, ֆելի-
քին (աքցան) եւ դուր՝ հիւսան կարե-
ւոր գործիքներն են»:

Սուբել - շինել. «աս օրօցքը վէ՞՞վ սուբեց»
- այս օրօցքը ո'վ շինեց:

Սուլուլիկ - սրածայր առարկայ:

Ստոր, սալմիւն - ստոր պատուհանի վա-
րագոյր եւ մանուսան փաթթելու:

Վ.

Վայը վրան գալ - չափազանց յոգնել:

Վայվերիկ - անճարակ, անձեռնհաս
մարդ:

Վաւոցուն - վաթսուն:

Վեգպահի, վեմպահի - մեծ պահ:

Վեմ - մեծ, հսկայ, վիթխարի:

Վէ՞վ - ո'վ:

Վէրք յըյնիլ - յանկարծակի վախնալ,
ցնցուիլ սաստիկ:

Վժիխտուն - վիճակ ձգելու տուն:

Վլալ - լուալ:

Վլանալ, վլացք - լուանալ, լուացք:

Վոռք - փիլաւի տակի այրած մասը:

Տ.

Տէգր, տագր - ամուսնոյն եղբայրը՝ հար-
սին տագրն է:

Տալ - ամուսնոյն քոյրը՝ հարսին տալն է:

Տակ - մարմնոյն վարի կողմը, նստուկ.
դարձեալ նակնդեղ:

Տաշիկ, ֆաշտաշիկ - քարոտ մանր եւ վայ-
րի տանձեր:

Տախտեղ - պղպեղ: Սեւ տախտեղ - հըն-
դիկ տախտեղ՝ համեմի տեղ ծառայող:

Տալսիկի - գետնի վրայ, ձիւնի մէջ եւն.
աջ ու ձախ դառնալ:

Տեմեր - տանիք՝ տափարակ:

Տերեւ - որթատունկի տերեւ. միւս տեսակ
ծառերունը՝ փուր կ'անուանեն արաբ-
կերցիք առհասարակ:

Տէնտաս - Տեառնընդառաջ:

Տըտիկ էմել - բառ՝ մանուկներու հանդէպ
գործածելու յատուկ. «քովս տոտիկ էրէ
քիչ մը, չէ նէ կը ծեծի'մ»:

Տիկ - ոչխարի կամ այծի մորթ՝ առանց

ճեղքելու հանուած, որուն մէջ ընդե-
ղէններ, պանիր, չէֆէլիկ կը լեցնեն:

Տկել - պանիրը, թանը տիկերու մէջ լե-
ցնել:

Տնկոզ - դռող, թեթեամիտ:

Տոցկան - յղի կամ տղաբերի մօտ կին:

Տոտիկ - մանր ոտքեր մանկան. ոչխարի,
այծի, ուլի կճղակ:

Տոտը, տոտըալ, տոտալ - անտեղի

խօսիլ, շարունակ խօ լիլ, դանդաղիլ:

Տօն տօն եւ պար պար - չրեխաները ոտքի

հանել տալու պար, շարժուածէ:

Բ.

Բաստ գալ կամ ռաւ գալ - իրարու հան-
դիպել, պատահիլ:

Բէհէն, ռէհէլ - բահան. հոտաւէտ եւ

կարմրադոյն համեմ խոտ մը:

Բէշէլ, ռէշէլ - ոռպով եւ մրգախառն ա-

նոյշ մը:

Բոնիկ, ռոնիկ - տանձ կամ ընկոյզ կամ

նուշ՝ թելի վրայ կ'անցնեն եւ թութի

կամ խաղողի մալէղի մէջ կը թաթխեն

եւ արեւի տակ կը չորցնեն, որ ռոնիկ

կամ շարոց կը կոչուի:

Բուլ կամ ռուլ - թութի կամ խաղողի

շիբէ, որ եփելէ վերջ արեւի տակ դըր-

ուելով կը թանձրանայ:

Ց.

Ցըյնիլ - շան, կատուի ... ձագ բերել:

Ցուրք - տանիքի եղերքներու դուրս ցըց-

ուած մասը:

Ցընել - փորհարութիւն ունենալ:

Ցախ - ճիւղ, ոտ. «ցախ աւել»:

Փ.

Փաք ըլլալ - մանկան վար իյնալ:

Փախուկ - խեւ, խեղբ կորսուած, թե-

թեւ:

Փատ - փայտ, ծեծ. փատել, ծեծել:

Փատնալ - ցուրտէն փայտի պէս ըլլալ.

սաստիկ մտելով կարծրանալ փայտի

պէս:

Փարշ - կոտ:

Փըքիկ - պղտորի ամենամանր մասը:

Փըքի - աղտոտ, տգեղ, չար:

Փսիկ, փսիկ - փատու (մանկան բառ):

Փլսել, փսլել - ործալ, փսխել:

Փշատի - սպիտակ խաւոտ տերեւներով

փշոտ եւ անուշահոտ ծառ մը: Պտուղը

փշատի խնձոր կը կոչուի (տճ. իյտէ):

Փոքոտ - տհաս թթուախառն որ բերանը

կը փոթոտէ:

Փոխիւն - աղացուած թութ՝ փոշի եղած:

Փոսիկ - խնդացած ժամանակ երեսին մէջ

տեղ ձեւացած փոքր խոռոչը, փոս:

Փոքիւն - փրփուր օճառի, ջուրի...

Փուր - ծառի, մացառի տերեւ:

Փտը - կտոր մը, մանր, փոքր մաս մը:

Փտընել - մանր մասերու բաժնել:

Ք.

Քած - էգ շուն. քած կ'ըսեն նաեւ գէշ կը-

նոջ (անարդական իմաստով):

Քաղերք - կենդանիի փորի մեծ պարկը

(իշկեմպէ) քաղերթ:

Քաշել - դժգոհել՝ պատկեր, քաշել:

Քառուսիք - ծննդաբերութեան կամ մե-

ռելի մը առաջին 40 օրերը...

Քեշկէկ - կանտամայով մսախառն ծեծուած

զարնուած կերակուր մը:

Քերփիւն - թրծուն հողէ աղիւս. հողա-

խառն յարդէ աղիւս, որով տուններու

միջնորմը կը փակեն:

Քեկիւր - ծակ ծակ մեծ դգալ մը՝ եփող

բանի մը վրայ գոյացած փրփուրը ժող-

վելու համար: Քարուկիւր, քարով եւ

կիրով շինուած տուն, կամուրջ...

Քափ կը կոչուի վերոյիշեալ փրփուրը:

Քեպէր - բոյսի ծաղիկ մը՝ որմէ աղցան

կը շինեն:

Քրան - կանեփ:

Քրուել - ոջիլ ժողովել զլիւն, վրայէն:

Քրը - կսկուծ հաց. նմանաձայն բառ:

Քիշել - հրել, բռնել, վռնել:

Քլեփ - տանձի, խնձորի... միջին կտեղէն

անճաշակելի մասը:

Քշպել - յանդիմանել:

Քուլա - մարացորենի տաք մոխիրին մէջ

պայթած սպիտակուցը:

Քուլիկ, ֆուլակ - ձիու, իշու ձագ:

0.

Օլրել - ոլորել. օլօր օլօր, ոլորունք:
Օլլալու - փայտէ բարակ կամ հաստ
զլան՝ խմորը բանալու համար:
Օճուկապա կամ շապիկ - օճի թողած մաշ-
կը:
Օրան - օրօրոց, որորան մանկանց. կախո-
րան, կախուած որորան:
Օրով - որովմէ ցորենի:

Ֆ.

Ֆոն, ֆէօն - հոն, այնտե՛ղ:
Ֆոն, ֆէօն - հոն, այստե՛ղ:
Ֆոտ, ֆէօտ - հոտ, այդտե՛ղ:
Ֆսալ, ֆսֆսալ - բեռան ծանրութեան
տակ հանուած նմանաձայն բառ:



Առածներ

Անթին քարն ալ կ'ուտէ կու:
Բանս բո՛ւրդ է:
Գալը (գալը) իրեն համար գէշ յերած
(երազ) չի տեսնար:
Էշն է հեծեր՝ էշ փնտռէն:
Էշը իշուն քով կապես նէ՛ հա՛ յառուցը
կ'առնա եա՛ փառուցը:
Էշն իշ գիտէ տէ՛ նուշն ի՛նչ է:
Էրես տո՛ւր՝ աստառ ալ կ'ուզէ կու:
Խենթն ըսաց՝ խելօքն հաւտաց:
Խենթին՝ խրա՛տը, սեւին սապօ՛նը:
Հէ՛մ լանք, հէ՛մ էրթանք:
Շունն յիշես նէ աքին խաղցնէ կու:
Ձուր տեսնայ նէ՛ ձուկ կ'ըլլի, մուկ տես-
նայ նէ՛ մուկ կ'ըլլի:
Վենձ էշը ախոռը մոռցանք:
Քուրոր չ'ըսեր քի թանս թթու է:

Աստիճաններ

Յամպուկցի կըցի կըցի,
Դռանն յէքսէն կըմըթեցի,
Արին էլաւ չի վըլացի:

Ըստամպօլ՝ փաստակը պօլ.
Խարբերդ՝ բամպակը պօլ.
Յարարկեր՝ բե՛ր ու կե՛ր:

Անէծքներ

Աչիդ փոքնա՛յ - Տունդ արի՛ - Շիդ
տակդ մնա՛յ - Գետինը մտնա՛ւ - Վար
ասնի՛ւ - Վայրդ տա՛ւ - Օր արեւ չի տես-
նա՛ւ - Դունէ դուռ մուրա՛ւ - Կեմուքեա-
նըդ խերը չի տեսնա՛ւ: Ձեռքդ չորնա՛յ -
Ժամուն դուռը մուրա՛ւ - Ուտդ կոյի՛ր -
Հողը մտնա՛ւ: Քօրնա՛ւ - Շիվանդը նըս-
տի՛ւ - Ձորնա՛ւ - Վար ասնիս՝ օխտը
դա՛քը...:

Աւելորդապաշտականք

Ձեռք կէտայ նէ՛ փարա պիտի դայ:
Սաղ աչքդ խաղայ նէ՛ բարի է, սօլդ խա-
ղայ նէ՛ չար է:
Աղը թափողը՝ անդենականին մէջ պըր-
դունքով (չթոռնք) տի ժողովէ:
Ունքդ (յօնքդ) խաղայ նէ՛ ճամբորդ տի
դայ տի:
Ուտքդ տապանը կէտայ նէ՛ ճամբորդ տըլ-
լիս տի:
Յերկնքի աստղնտիքը վէր տի էրթան նէ՛
մէկը մեռած կ'ըլլի:
Գիշերը շունը օռնայ նէ՛ մահ կու պա-
տահի դուռ դըրացնու քով:
Սոխին փուրը կրակը ձգես նէ՛ դժոխ
կ'երթաս:
Տղուտ ըզունկը (եղունդ) մի՛ կ'ըլլեր քի
դող չըլլնի:
Կըլյած ըզունկը կրակը նետես նէ՛ խեն-
թենաս կու:
Հարդ, մարդ լաց ընես նէ՛ վատկած ու-
կինքդ քար կը կըլլին:

Հ. ԱԼԵՔՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Յետ մահու հրատարակութիւն)

Վ Ե Ր Ջ

ԱՐՇԱԿ ԹԱԳԱԻՈՐ

ԵՐԳԱՆԱՌՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

(Շար. տե՛ս բազմ. 1958, թ. 8-10, էջ 204)

Ե Ր Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր

(Բեմը կը ներկայացնէ
ընդունելութեան նոյն դպիկներ)

ՏԵՍԻՒ Ա.

(Վարագոյրը բացուելուն՝ Պերն պա-
հակը ներս կը մտնէ Հայաստանի երեք
նահանգներուն բոլորները՝ Արտաշատ,
Երուանդ եւ Զաւէն, եւ փոքրիկ Սպան-
դարատ՝ հազիւ 13 տարեկան, Կամարա-
կան տոհմին միակ ժառանգը: Հագուած
են այնպէս՝ ինչպէս Աւարայրի Դիցազ-
ներու նախարարները: Կը կրեն մօրուք եւ
սուրբ: Պերն ծոխով կը մեկնի):

ԱՐՏԱԽԱԶԴ. - Ներսէս Հայրապետը
մեզ արքունիք կանչեր է, թագաւորին եւ
սպարապետին հետ հաշտեցնելու համար:
ԵՐՈՒԱՆԴ. - Ձարմանալի բան. Կա-
թողիկոսը յետ անիծելու Արշակ թագա-
ւորը՝ սպաննացեր էր այլեւս արքունիք
ոտք չկոխել: Հիմա ի՞նչ անցաւ դարձաւ
որ իր անդամաւոր որդունքը ետ առեր է:
ԶԱՒԷՆ. - Ձարմանալու ի՞նչ կայ, Ծո-
փաց աշխարհի բոլոր, Գրիգորի տան կա-
թողիկոսները կը կշտամբեն Արշակունի
թագաւորները, կ'անիծեն ու կը նոյնեն.
Թագաւորները, կ'անիծեն ու կը նոյնեն.
Բայց երբ Հայաստանի գերագոյն վտանգ
մը սպառնայ, անոնք միշտ թագաւորնե-
րու կողքին կը կանգնին:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Արեան կապն է, և այդ
կապին ձրկու ծայրերն ալ՝ Մամիկոնեան
եւ Կամարական տոհմերն են:
ԵՐՈՒԱՆԴ. - (Շոյելով Սպանդարտի

գիտաւոր գլուխը) Սիրուն իշխանիկ, ո՞վ
ըսաւ քեզի այդ բանը:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Համարձակութեամբ)
Աղատարարս, վասակ սպարապետը, ո-
րուն գրկին մէջ մեծցայ:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Խոժոռած) Թերատի
իշխան, ինչո՞ւ յիշեցուցիր ինծի այդ ա-
նունը: Վերջին յաղթանակով՝ այդ ատելի
Մամիկոնեանը վաճաղնի հաւասարեցաւ:

ԵՐՈՒԱՆԴ. - Յաղթական սպարապետը
այնչափ հմայք ունի Ծոփաց աշխարհի
մէջ, որ հակառակ իմ յայտնի հրամանիս,
ոչ միայն իմ ծաղկատի երիտասարդներս,
այլ մանկամարդ աղջիկներն ալ հայրենա-
սիրութեամբ վառուած, կը բաղձան դուն-
դագունդ վաղել Մամիկոնեան դրօշին
տակ: Վասակը հայկական երկնակամարին
փրայ պերճափայլ աստղ մըն է, որուն
լոյսը երբեք չի շեղանի:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Ի՞նչպէս կ'ուզես որ չի-
ջանի. հայ ժողովուրդը Գրիգորեան եւ
Մամիկոնեան տոհմերը միշտ նկատած է
եւ միշտ պիտի նկատէ հայրենասիրութեան
ջահեր:

ԵՐՈՒԱՆԴ. - Բայց Մամիկոնեանները
հայրենասիրութեան ո՞ր բովին մէջ թըր-
ծուեր են: Ի՞նչ օրէնքով անոնք ազդ եւ
հայրենասիրութիւնը իրենց մեղաճնորհ
դարձուցեր են:

ԶԱՒԷՆ. - Անոնք թրծուեր են Ներսէս
Պարթևի դպրոցին մէջ: Կը տեսնե՞ս այս
ծաղկատի իշխանը (ցոյց տալով Սպան-
դարտը), աս ալ նոյն դպրոցին շունչով
ուտեր է:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Աշխուժով) Այո՛, ա-
ղատարար հայրազիրս այդ դպրոցին մէջ
գրեւ է գիտ: Հոն սորվեցայ հայրենիքիս
չդաւաճանել:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Այս սիրուն պատանեա-
կը իրաւունք ունի. իր ներկայութիւնը
միայն տեղի իշխաններուն մէջ, Արշակի
համար արդէն չարաբանք մըն է:

ԶԱՒԷՆ. - Արտաշատ, չե՞ս համարիր
որ մեր ազգային ներկայ ողբերգութեան
մէջ՝ դաւաճող մը խառնուած է: Մինչ վա-
սակ Մամիկոնեան իր փառքի եւ զօրու-